# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<08>> Հուլիսի 2020թ. N ՄՈ/236-2020

ք. Արմավիր

**<< ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՐԱՅԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Լիլիթ Պետրոսյանի 2020 թվականի հուլիսի 6-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. <<Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիթ Պետրոսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2020 թվականի հուլիսի 15-ից օգոստոսի 18-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Լիլիթ Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Լարիսա Մարգարյանին:
3. Լիլիթ Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2020 թվական օգոստոսի 19-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 08.07.2020 13:24:44 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230